ՌՈԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ
(տնտեսագիտական մտորումներ)

Նշանավոր պատմաբան Լեոն «Ստեփանոս Նազարյան» մենագրության առաջին հատորը ավարտում է հետևյալ խոսքերով. «Մի ընդհանուր ակնարկ գցելով Նազարյանցի մատենագիտական գործունեության վրա, ինչ կտեսնենք: Այդ գործունեությունը ինքնըստինքյան այնքան նշանավոր չէ, որ կարողանանք նրան հարստություն համարել մեր գրականության համար: Այն, ինչ տվել է Նազարյանցը իր գրքերում ոչ մի առանձին ինքնուրույնություն ունի, ոչ մի առանձին տաղանդի կնիք է գրում իր վրա... :

Եվ Նազարյանցը շուտ կմոռացվեր...: Բայց նա չէ մոռացվել և չը պիտի մոռացվի, որովհետև տվել է նաև «Հյուսիսափայլը»*:

«Հյուսիսափայլի» Նազարյանցը մի խոշոր անձնավորություն է մեր գրական վերածնության արշալույսին»[1]: Ինչպես նկատում է գրականագետ Ռ.Նանումյանը, «հայ ազգային լուսավորական շարժման պատմության մեջ» նրա մասնակցությունը եղել է ընդգրկուն[2], իբրև «համապարփակ սեփականություն», ոչ պատահականորեն պայմանավորելով և՛ գրականագետների, և՛ պատմաբանների, և՛ փիլիսոփաների, և՛ տնտեսագետների անդրադարձը նրա հայեցության տարբեր շերտերին: Սույն հոդվածի քննության առարկան Նազարյանի տնտեսագիտական հայացքներն են: Չի կարելի ասել, թե նրա տնտեսական հարցերի արծարծումները գրված են պրոֆեսիոնալ մակարդակով, այնուամենայնիվ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ժամանակի հայ տնտեսագիտական մտքի բնութագրության տեսակետից:

«Ինչ է վաճառականության խորհուրդը ընդհանրապես...» հոդվածում Նազարյանը, հիմք ունենալով եվրոպական տնտեսական ուսմունքների մերկանտիլիզմի և ֆիզիոկրատների առաջադրույթները, թե տնտեսության որ ճյուղին վերապահել առաջնությունը՝ վաճառականությա՞նը, թե՞ երկրագործությանը, գրում է. «Ամենևին անխել բան է այն վիճաբանական խնդիրը, արդյո՞ք երկրագործությունը, թե՞ վաճառականությունը ավելի

---

* Ամսագիրը հիմնադրել և խմբագրել է Ս.Նազարյանը 1858-1864թթ.:

[1] Լեո, Ստեփանոս Նազարյան, I հատոր, Թիֆլիս, 1902, էջ 223-224:

[2] Ռուզան Նանուրյան, Ստեփանոս Նազարյան, Երկերի ժողովածու, Ե., 1996, էջ 5:

մեծակշիռ էր։ Երկուքը ևս հավասարապես խորհրդավոր են, և մինի հետ մնալը կամ առաջ գնալը առաջացնում է վնասակար կամ օգտակար ազդեցություն մյուսի վրա։ Ցանկությունը հաջողություն տալու երկրագործության, վնասելով ֆաբրիկաներին, պիտոյ է ընծայել այն մարդերի անձնական շահասիրությանը, որ, թեպետ փոխկապված էին որպիսությունքը, այնուամենայնիվ կկամենային իրանց կալվածներից ավելի արդյունք քաղել վնասելով, կամ թե պիտոյ էր այդ բանը տալ տգիտությանը թե ինչ փոխադարձ ազդեցություն միմյանց վրա ունեին երկրագործությունը և վաճառականությունը»[1]։

Տնտեսության երկու նշված հատվածների զարգացումը ֆունկցիոնալ իմաստով ենթակա է հավասարակշռության սկզբունքին, եթե երկրագործությունն արտադրում է ավելի շատ արդյունքներ, քան անհրաժեշտ է երկրի պահանջների համար, ապա ավելի շահավետ է ավելցուկի իրացումը «առաջադեմ ազգերի վաճառահանդեսների մեջ շահավետությամբ ծախել, և դորա փոխանակ այն աշխարհների պատրաստած բաները ներս բերել իր աշխարհի մեջ»[2]։

Ընդհանրապես, տնտեսական հարցերի վերաբերյալ Նազարյանի շարադրանքը հաճախ թռուցիկ բնույթի դիտողություններ էին, ավելի շուտ առաջադրույթներ, որոնք թեև վերլուծական վավերացումներ չեն ստանում, այնուամենայնիվ վկայում են դրանց ակունքների նրա լավատեղյակության մասին։ Այսպես.

- «Եվ որովհետև գյուտերը, ֆաբրիկագործությունը և գիտությունը սահման չունին, այս պատճառով մի քաղաքագործված աշխարհ երբեք տեղիք չունի վախենալու ժողովրդի բազմանալուց»[3],

- «Մեքենաները թեթևացնում են ապրանքի պատրաստության ծախքը (ինքնարժեքը-Ռ.Ս.), և հեշտությամբ էժան գնով ճարելու իր համար կեցության հարմարությունները, շատացնում է նոցա գործածությունը, և նոքա որ մի անգամ շահվել էին արծաթ, շուտով լայնացնում են իրենց գործի շրջանակը և մեծացնում իրենց հարստությունը»[4],

- «...մի անգամ հաստատված զանազանությունը ունեվորության մասին, ոչ թե միայն անբաժանելի է մարդկային բնությունից, այլ մի իմաստուն նախատեսություն է նրա օգտի համար, որովհետև հարստությունը որով բաղդավորվում են մի մի մարդիկ, ընդհանուր օգտի համար

---

[1] «Հյուսիսափայլ» 1858, №3, էջ 231։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 232։

[4] Նույն տեղում, էջ 233։

ետ է դնում մի փոքր բան ավելի, քան թե հարկավոր էր բոպեական կարոտության համար...»,[1]

- «... մի ազգ իր իսկական առևտրական զորությունը ստանում է միշտ սակավ մարդերի ձեռքից, որ ունենալով իրանց մեջ առանձին հասկացողություն, գիտեն ամենայն պատեհ միջոց ըմբռնել և օգտակար կացուցանել»[2] և այլն:

Ս.Նազարյանը ազգի բարեկեցությունը կապում է «վաճառականության և ֆաբրիկագործության առաջադիմության», «գույքի կուտակության կրթյալ ընկերությունների» հետ: Նշելով մրցակցության նշանակությունը երկրի հարստության աճի, ձեռնարկատիրական գործունեության աշխուժացման համար, միաժամանակ նկատում է, որ մրցակցության հետևանքով հարստության կենտրոնացումը սահմանափակ թվով մարդկանց ձեռքում, իր բացասական հետևանքներն է ունենում չունևոր խավի վրա: Եվ այս իմաստով նա տնտեսական-ազգային շահերի ներդաշնակությունը կառուցում է «միջին դասակարգի» գաղափարի վրա, ի դեպ վերջինս ուղեկցել է հայ տնտեսագետների հայեցությանը նաև հետագա տասնամյակներին: «Մի այլ անհարմարություն, - գրում է Ս.Նազարյանը,- որ առաջանում է հարստության չափազանց կուտակությունից մի քանի վաճառականների և ֆաբրիկանտների ձեռքում, այն է, որ ժողովրդի միջին դասակարգը քանդվում է. ժողովրդի առավել մեծ մասը դառնում է հասարակ մշակ և սակավաթիվ հաջողակ մարդիկ չափից դուրս բարձրանում են: Բայց խոսելով իսկապես, ժողովրդի միջին դասակարգը առավել խորհրդավորն է այն պատճառով, որ նա է ազգային իմացականության առաջ տանողը, և եթե նա բավական բազմաթիվ է, ապա լինում է մի հսկող պահապան ստորին ժողովրդակարգերի սեփականության վրա և հակառակ նոցա տարապայման ձգտողություններին: Առանց մի միջին ժողովրդակարգի բոլոր ջանահնարությունները և գյուտերը դադարում են, բազմացած ժողովուրդը չէ գտնում բավական պարապմունք. այս բանը դարձյալ, նայելով աշխատավոր մարդկանց սակավությանը, փոքրացնում է պիտույքների գործադրությունը, որպես և նոցա մեջ, որ առանց աշխատանքի շրջում էին այս կողմ ու այն կողմ, զարթեցնում է հոժարություն թողնել և հեռանալ հայրենի աշխարհից և առհասարակ զորացնում է չքավորությունը, որին պիտոյ էր համբերել ակամա ծուլության մեջ»[3]: Դրանք քաղաքային ու գյուղական մանր ու միջին սեփականատերերի խավերն

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 234:

[3] Նույն տեղում, էջ 235:

էին, որոնք Նազարյանին ավելի գործնական էին ներկայանում ձևելու սոցիալական առաջադիմության սկզբունքները։

Ս.Նազարյանը կարևորելով առևտրի դերը երկրի հզորացման համար, նա դա կապում է երկրի տնտեսական ու քաղաքական պատմության հետ։ Իբրև դրույթի հաստատում, նա վկայակոչում է Անգլիայի օրինակը, որը «ֆաբրկա-գործարանային կարողության» մեծացման արդյունքում իր համար ստեղծել է մոնոպոլիայի վիճակ «աշխարհի վաճառանոցներում»։

Ս.Նազարյանը գտնում է, որ հարստություն կոչվածը հարկ է դիտել նրա առաջացման և գործադրության առումներով։ Հասարակության տարբեր խավերի վերաբերմունքը սեփականության նկատմամբ եղել է հակասական, անհատի անձնական ու հասարակական կյանքի հետ ունեցած առնչություններում՝ մի դեպքում հարստությունը որպես հասարակության չարիքների պատճառ, իսկ առավելապես բարոյականության, բարեկեցության, կարեկցության, արդարության, մարդասիրության, հարստության բազմապատկման աղբյուրի։

Դրվատանքի է արժանի «ինքնաստաց հարստությունը», որն «ավելի մեծ արժողություն ունի, քան թե ժառանգականը», այսինքն, որը վաստակված է «արդար ճանապարհով» և «օրինավոր տևողական աշխատասիրությամբ»[1]։

Ս.Նազարյանը ընդլայնում և հստակեցնում է հարստության նշանակության իր պատկերացումները, որոնք լինելով դուրս սոցիալիստական ուսմունքների հավասարարական սկզբունքներից, հարստության պոտենցիալի ուղղվածությունն ավելի շուտ կապում էր հասարակության նյութական հիմքերի բազմապատկման և սոցիալական հավասարակշռության հետ. «բայց և բոլոր հասարակության համար ունի հարստությունը մի ճշմարիտ արժանավորություն. այսինքն, օգտակար ու շահավետ է հասարակությանը, որ բախտի բարիք ասած բանը հավասար չափով բաժանված չէ հասարակության անդամների մեջ, այլ որ մի քանիսը ունեին նորան ավելի առատ ու լի չափով։ Այն հարստությունը, որ անգործ չէ, այլ որ պիտի կամ նոր հարստություն վաստակեր կամ թե այլապես գործ է դրվում և անցնում է մարդկանց ձեռք, դա գոյացնում է ավելի կյանք և գործականություն մարդկանց մեջ։ Նա հաջողություն է տալիս հասարակության ժրաջանությանը, աշխատասիրությանը և վաստակասիրությանը. այստեղ զարթեցնում է մեքենայական, այնտեղ իմացական զորություններ, հասարակաց բարին առաջադեմ կացուցանելու համար։ Մինի համար է նա շարժառիթ և հնար օգտակար գյուտերի և ախորժելի

[1] Նույն տեղում, 1860, №10, էջ 317։

բաների, մյուսին տալիս է նա առիթ հաջողությամբ նմանելու և կատարելագործելու արդեն հնարած անոթները (գործիքը) հարմարության և վայելչության»[1]:

Համաձայն նրա դիտողությունների, առևտրի ոլորտում, հատվում են ժողովուրդների միջև փոխհարաբերությունները, իրենց վրա կրելով հասարակության որպես «առևտրական միության» վերաբերյալ հայեցության ինչ-ինչ նստվածքները:

Ինչպես հայտնի է, եվրոպական երկրներում կապիտալիստական հարաբերությունների ձևավորման արշալույսին շրջանառության ոլորտին տրվում էր առաջնություն, համաձայն որի ազգի հարստությունը ստեղծվում է առևտրի ոլորտում: Նազարյանի հայեցության մեջ հարստություն հասկացողությունը ստանում է մի շատ ավելի լայն իմաստ, որպես թե «հարստության շրջանառության» մեջ կարող է իրացվել նրա հասարակական զորությունը: Այն թույլ է տալիս երկրներին դարձնել կապակից, միմյանց հետ փոխանակվելու «իրենց աշխատասիրության պտուղքը, ճարտարության գործերը, գիտության լույսը» և շատ այլ բաներ, դրանով իսկ «բազմապատկելով» բոլոր «ազգերի գործերն ու աշխատությունքը»:

Այսպիսով՝ հարստությունը ներկայացնում է հատկանիշների հյուսվածքի մի միասնություն, որում հատկապես խորհուրդ ունի հարստություն-գիտություն կապը: Մինչդեռ, մեր իրականության մեջ «Հայոց մեծատունքը մինչև այժմ նայում են գիտության վրա որպես մի անպատիվ աղախնու վրա, որի պաշտոնն էր կատարել նոցա ցանկության կամքը, անուշ խունկեր ծխելով նրանց քթին, գովասանելով և բարձրացնելով նոցա չգործած սխրագործությունքը»[2], առաջնորդվելով այն հոգեբանությամբ, թե «մեր պապերը եկել ու գնացել են հանգիստ ապրելով իրանց համար, նրանք երջանիկ էին առանց ուսման և գիտության»[3]:

Փոխվել են ժամանակները, փոխվել են հին ու նոր սերունդները միացնող ու բաժանող սահմանները: Հասարակության առաջընթացը այսուհետ ենթակա է գիտությունների այլատար ամբողջության պահանջին: «Մեզ հայերիս, մեր բազմապահանջ ժամանակներում,- գրում է Նազարյանը,- հերիք չէ մի լոկ գրագիտություն, մեզ և մեր մանուկներին հարկավոր է գիտություն, գիտություն բազմամասնեայ, գիտություն տեսական և գործնական, որովհետև ոչ ամենայն մարդ միատեսակ կոչումն ունի. ոմանք կամին լինել ուսումնականը, մյուսները վաստակագործք, վաճա-

[1] Նույն տեղում, էջ 321-322:

[2] Նույն տեղում, էջ 322:

[3] Նույն տեղում, 1861, №3, էջ 251-252:

ռականք և արհեստավորք։ Այս բազմատեսակ պիտույքը միասին լցուցանելու համար, ամենայն օրինավոր դպրոց մեր օրերում ունի ընթանալու բավական բազմամասնյաց ոճով»[1]։ Եվ նա ծրագրել էր Մոսկվայում բացել գիտական և գործնական բաժիններով դպրոց։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նրանում դասավանդվող հետևյալ առարկայական ցանկը. որպես ընդհանուր առարկաներ՝ աստվածաբանություն, ընդհանուր պատմություն և աշխարհագրություն՝ վիճակագրական վերլուծություններով, բնապատում (բնապատմական գիտություն), ֆիզիկա, աշխարհաբար և գրաբար լեզու, լատիներեն, ռուսերեն և եվրոպական լեզուներ, գիտական բաժնի համար՝ մաթեմատիկական աշխարհագրություն (կոսմոգրաֆիա), մաթեմատիկա, ֆիզիկա, գործնական բաժնի համար՝ վաճառականության պատմություն, վաճառականական հաշվապահություն և վաճառաշահական նյութերի գիտություն, վաճառականական նամակագրություն օտար լեզուներով[2] և այլն։

Նազարյանը իրավացիորեն ամեն մի գործունեության իրականացումը կապում է մարդու նյութական կամ հոգևոր պահանջմունքների հետ։ Վերջիններս մշտապես փոփոխվում են, ընդլայնելով հասարակության գործունեության ոլորտները։ Հասարակական պատմությունն ի վերջո պահանջմունքների աճի պատմություն է։ Մարդկության վաղ ժամանակներից մարդու խիստ սահմանափակ պահանջմունքների աճի արդյունք է երկրագործության, առևտրի, ֆաբրիկա-գործարանային գործունեության, և ընդհանրապես տնտեսական, սոցիալական ու քաղաքական կացության արդի բովանդակությունը։ «Ամենայն պիտուք մարդկային կյանքի մեջ,- գրում է Նազարյանը,- ծնվում է և զոյանում է, եթե կա հարկավորություն...։ Բայց եթե մարդկության մեջ ծնել են և առաջ են գնացել արհեստները և ճարտարությունները, դրանց ծնող և առաջացնող պատճառը եղել է միշտ հարկավորությունը...»[3]։ Սակայն նյութական բարեկեցության այդ առաջընթացը չէր կարող կատարվել առանց հոգևոր զարգացման։ «Ուրեմն եթե մարդկային ազգը,-շարունակում է Ս.Նազարյանը,- հասել է այսքան մեծ և երևելի մարմնավոր բարեկեցության, նյութական հարկավորության պատճառով միայն, ապա մի՞թե նորա իմացական բարեկեցությունը կարող է առաջադեմ լինել, եթե չկար մի նույնպիսի կարիք, մի նույնպիսի հարկավորություն պատրաստելու մեր համար հոգևոր բարիք և իմացական վայելչություն։ Կարծեմ, ոչ ոք մեզանից կարող չէր այնքան անմտանալ..., որ կարծում էր թե նա կարող է

[1] Նույն տեղում, էջ 253-254։

[2] Նույն տեղում, էջ 257-258։

[3] Նույն տեղում, 1860, №1, էջ 139-140։

ապրել որպես այս աշխարհի քաղաքացի, առանց զգալու իր մեջ լուսավորության կարիք, առանց լցուցանելու իր բանական հոգու պիտույքը այն հնարներով, որ մեր ժամանակները առաջարկում են նրան, այսինքն գրասիրությամբ և ընթերցասիրությամբ»[1]:

Ս.Նազարյանը նյութական ու հոգևոր արժեքների միասնության ու դրանց հետագա կատարելագործման մեջ էր տեսնում հայ ազգային պահվածքի հետագա ուղին, որով անցել է «եվրոպական մարդկությունը իր կրթության ընթացքի մեջ»:

Ս.Նազարյանի ընդհանուր հասարակագիտական և տնտեսագիտական հայացքների բնութագրության առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նրա «Ֆրանսիական հեղափոխության պատճառք» ուսումնասիրությունը: Նրա կարծիքով, այդ պատճառները սկիզբ են առել շատ ավելի վաղ՝ Լյուդովիկոս XIII ժամանակներից: 1614 թվականին տեղի է ունենում ֆրանսիական ազգի փոխանորդների վերջին ժողովը, այն «միջնորդող իշխանությունը, որ ժողովուրդը և թագավորը մոտեցնում էր միմյանց»: Ազգային խորհուրդը այն «պատվական հնարքն» էր, որ կոչված էր «օրինավոր միջնորդներով ճշմարտությունը մոտ բերել արքայական աթոռին, ժողովրդի կարիքը արժանի և զորավոր կերպով բացահայտել, ցույց տալ ճանապարհը, թե ինչպես պիտոյ էր խնամ տանել նոցա, և ընկերական կազմածը, հանգամանքներին համեմատ, իր ամենայն մասերով հանդարտ ու ապահով առաջ տանել զուգապատշաճ միաբան ներգործությամբ Աթոռի և Ազգի փոխանորդների կողմից»[2]: Ֆրանսիայի պետական համակարգի այդ ճեղքվածքն ավելի խորացավ Լյուդովիկոս XIII առաջին նախարար Ռիշելիեյի, ապա Մազարինի և այլ պետական գործիչների կառավարման բռնակալական ձևերի իրականացման հետևանքով:

Եվ, իրոք, XVII դարի Ֆրանսիան մարմնավորում էր թագավորական միապետությունը: Լյուդովիկոս XIV «պետությունն այդ ես եմ», որպես թե «հասարակական կարգը ամբողջությամբ սկիզբ է առնում ինձանից»[3] սկզբունքի վրա էր հիմնված Ֆրանսիայի գաղափարը:

Ս.Նազարյանը նկատում է, թե «բռնակալության վնասակար ներգործությունները» տեղ էին գտնում ամենուր: Կոլբեռի և Լուվուայի նման պետական գործիչներ այլևս չկային, իսկ ծայր առած բազմաթիվ պատերազմները, պալատականների շռայլություններն ու ագահությունը երկիրը դրել էր ծանր տնտեսական կացության առաջ: «Հարկերի բազմությունը,- գրում է Ս.Նազարյանը,- ծանրանում էր ժողովրդի վրա, տերու-

---

[1] Նույն տեղում, էջ 139-140:

[2] Նույն տեղում, 1858, №4, էջ 267:

[3] В.П.Волгин Развитие общественной мысли во Франции в XVIII веке, М., 1977, с. 10.

թյան ծախքերը կարող էին միայն բռնավորական հնարներով կամ թե հանդուգն գործողություններով դուրս հանվել. մի անտանելի բեռն պարտքերի, որ առաջացել էին տնողական պատերազմներից, կառավարության սխալներից, թագավորության շինասիրությունից և փառասիրությունից, փակեց հասարակության բարեկեցության աղբյուրները։ Ժողովրդի բազմությունը օրեօր առավել նվազեցավ, սառեցավ ու կապվեցավ երկրագործությունը, վաստակասիրությունը և վաճառաշահությունը, որովհետև չկար արծաթ ոչ մի աշխատանք առնելու համար»[1]։ Լյուդովիկոս XIV-ը ժառանգություն էր թողել դատարկ գանձարան, շուրջ երկու միլիարդ լիվր պետական պարտք, որի տարեկան տոկոսները կազմում էին պետական եկամուտների նշանակալից մասը։ Այսպիսի տնտեսական կացության պայմաններում Ֆրանսիա է հրավիրվում շոտլանդացի Ջոն Լոն՝ երկիրը փրկելու ֆինանսական կործանումից։ Գրականության մեջ լավ հայտնի է, թե ինչու Լոյի համակարգը կազմալուծվեց։ Ահա, թե Ս.Նազարյանն ինչպես է նկարագրում Լոյի «փորձը». երկրի ընդհանուր կացությանն «ավելացավ այն ընդհանուր ապշությունը, որ բերեց ֆրանսիացոց վրա Շոտլանդացի Լոյի արած կարգադրությունը. բոլոր ժողովուրդը խելագարվեցավ։ Այն խաբեական հույսերը, որ Շոտլանդացին տված էր, մոլորեցրեցին վերջումը և առավել զգաստ ու պարկեշտ մտքերը։ Սկզբում, երբ որ այդ ծիծաղելի խելագարությունը վեր երևաց, որ և շատ հեշտ տարածվեց, որովհետև մարդիկ դեռևս ուղիղ հասկացած չէին, թե ի՞նչ հարաբերություն ունի արծաթը ճշմարիտ հարստության հետ, թղթեղեն արծաթը մետալեղեն նշանի հետ, սկզբումը կարող էին արդարև երևակայել, թե մի շատ շահավետ բան էր իր արծաթի գույքը փոխել Աքցիաներ, որոնցից հուսալի էին կամ թե երևում էին ահագին շահավետություններ։ Հանկարծակի առաջացան չտեսած ու չլսած հեղափոխությունք արծաթի աղքատները հարստացան առանց աշխատելու, հարստականները ևս առավել ճոխացան առանց զորություն գործ դնելու, և ամենքը չափից ու սահմանից դուրս անձնատուր եղան զեղխության բոլոր արատներին ու վայելչություններին, որ և հեշտ կարող էին լցուցանել։ Բայց երբ որ շարժարանի լարերը դուրս պրծան իրենց տեղերից... այն մեծ երազը չքացավ հանկարծակի, այնուհետև կարծեցած հարստականքը գլորվեցան ամենախորին աղքատության մեջ և ձեռք ձգեցին հուսահատության վերջին հնարներին...»[2]։

XVII-VIII դարերում Ֆրանսիայում անտեսված էին գյուղատնտեսության շահերը, որը հասել էր ծայրագույն քայքայման։ Եվ ահա ի հայտ

---

[1] «Հյուսիսափայլ», 1858, №4, է 273-274։

[2] Նույն տեղում, էջ 275-276։

եկան մտածողներ, որոնք երկրի և ազգի հիմքը կապում էին այդ ճյուղի հետ՝ ծայր տալով ֆիզիոկրատների դպրոցի առաջացմանը: Ինչպես ասում է Ս.Նազարյանը «առաջացավ ևս մի առանձին ուսումնարան քաղաքական տնտեսության համար, որ պատիվ էր դնում հողի բերքերին միայն, որ և իր միակողմանի հայացքով և տարապայման ուղղությամբ մոլորվեցավ, բայց իր սխալանքով պատճառ տվեց ուշադրություն գործելու այդ բանին և փրկավետ հարցուփորձ առաջացրեց»:[1] Նրա ակնարկը վերաբերում է ֆիզիոկրատների այն հայեցությանը, համաձայն որի ազգային հարստության միակ աղբյուրը գյուղատնտեսությունն է:

XVII դարի կեսերից Ֆրանսիայում ձևավորվում է մի նոր հասարակահայեցություն՝ «մի այնպիսի վայրենի գործունեություն իմացականության հանդեսի մեջ», որը ի վերջո պիտի «տերության հիմնախարիսխների տակը փորեր և կործաներ»: Վոլտերի, Արժանսոնի, Դը Ալամբերի ազատական գաղափարները անընդունելի էին Նազարյանի համար: Միաժամանակ համակրանք էր տածում ֆիզիոկրատական մտքի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ժակ Թյուրգոյի հանդեպ: Լինելով ավելի լայնատես և ազատ Ֆ.Քենեի պահպանողական նկրտումներից, նա ֆիզիոկրատների ուսմունքը ավելի գիտականացրեց: Որպես Ֆրանսիայի ֆինանսների գլխավոր վերահսկողի, նրա կարճատև գործունեությունը նշանավորվեց մի շարք տնտեսական ռեֆորմների իրականացումով: 1776-ին Թյուրգոյի կողմից հրապարակած էդիկտները՝ հարկերի, հացի առևտրի, ցեխերի մասին, ուղի էին հարթում տնտեսական ազատության համար: Ռեգլամենտացիան նա համարում էր «աբսուրդ», «մշտական գրանցված սուր» և «իշխանության լծակ», «ովքեր դրանից օգտվում են»:

Ռեֆորմատոր նախարարը շուտով ազատվում է պաշտոնից: Սակայն «այնպիսի մի ժամանակ, երբ միայն ամենավճռական ռեֆորմը կարող է կանխել հեղափոխությունը, ռեֆորմի չհաջողված փորձը ընդունակ է միայն արագացնելու այն»[2]:

Ս.Նազարյանը մի շատ հետաքրքիր դիտողություն է կատարում այս ոգով, թե հեղափոխությանը նախորդող շրջանում «Վերանորոգությունք, հիմնովին, մեծարարած, հաստատուն վերանորոգությունք հարկավոր էին, և անպատճառ պիտոյ էր տերությանը լայն ու շրջանկատ տեսությամբ, քաջ և զորավոր կերպով և տոկուն համբերությամբ ձեռնարկել և գլուխ տանել այդ վերանորոգությունքը, եթե չկամեր նա պատրաստել իր և թագավորության կործանումը»[3]: Թյուրգոյի կողմից իրականացվող ռե-

---

[1] Նույն տեղում, էջ 281:

[2] Эдгар Фор, Опала Тюрго 12 мая1776г., М., 1979, с.427-428.

[3] «Հյուսիսափայլ», 1858, №7, էջ 24:

ֆորմները հասարակության զարգացումը մաքրում էր ֆեոդալական կապանքներից, ուղի հարթում կառավարման նոր ձևերի համար, մինչդեռ Նազարյանը պատրանք ունենալով «լուսավոր միապետության» գաղափարը, ֆրանսիական հեղափոխության պատճառները վերագրում էր այս կամ այն պետական գործիչների բռնակալական և ոչ դեմոկրատական մեթոդների կիրառմանը[1]:

Գրիգոր Արծրունին Ս.Նազարյանին նվիրված մահախոսականում նրան համարում է «հայոց ժամանակակից գրական ասպարեզում վերանորոգիչ և հեղափոխիչ»[2]: Նա 1850-60-ական թվականների հայ հասարակական մտքի այն սերնդից էր, որը հանդես էր գալիս «դարաշրջանի հայ հասարակական զարգացումը ուղեգծելու պատմական առաքելությամբ»[3]:

Ս.Նազարյանի տնտեսագիտական մտորումները չեն հավակնում վերլուծական խորության, բայց կրթության ու գիտության, վաճառականության, հարստության, կառավարման ձևերի և այլ հարցերի վերաբերյալ նրա դիտողությունները, որոնք հետագայում պիտի «լայնանային ու ընդարձակվեին» հետաքրքրական են ժամանակի հայ տնտեսագիտական մտքի իմացությունների առումով:

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ (տնտեսագիտական մտորումներ)

ՌՈԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

Համառոտագիր: Ս.Նազարյանը XIX դարի հայ մտավոր պատմության ամենահիշարժան անուններից է, որպես «մի խոշոր անձնավորություն մեր գրական վերածնության արշալույսին»: «Հայ լուսավորական շարժման պատմության մեջ» նրա մասնակցությունը եղել է ընդգրկուն, իբրև «համապարփակ անհատականություն» ոչ պատահականորեն պայմանավորելով և՛ գրականագետների, և՛ պատմաբանների, և՛ փիլիսոփաների, և՛ տնտեսագետների անդրադարձը նրա հայեցության տարբեր շերտերին: Սույն հոդվածի քննության առարկան Նազարյանի տնտեսագիտական հայացքներն են: Կրթության ու գիտության, վաճառականության, հարստության, կառավարման ձևերի և այլ հարցերի վերաբերյալ նրա դիտողությունները, որոնք հետագայում պիտի «լայնանային ու ընդար-

---

[1] Տես՝ Ռ.Ա.Կարապետյան, Ստեփանոս Նազարյանց, Փիլիսոփայական հայացքներ, Ե., 1976, էջ 144:

[2] «Մշակ», 1879, №62:

[3] Ս.Սարինյան, Հայ գաղափարաբանություն. Պատմաքննական տեսություն, Ե., 1998, էջ 27:

ձակվեին» հետաքրքրական են ժամանակի հայ տնտեսագիտական մտքի իմացությունների առումով:

Բանալի բառեր. *կրթություն, գիտություն, առևտուր, վաճառականություն, հարստություն, միջին դասակարգ, նյութական և հոգևոր պահանջմունքներ:*

СТЕПАНОС НАЗАРЯН (экономические раздумья)

РОБЕРТ НЕРСЕСОВИЧ САРИНЯН, *д.э.н., профессор*
главный научный сотрудник
Института экономики им. Котаняна НАН РА

Аннотация: Степанос Назарян один из самых упомянутых имен в истории армянской интеллектуальной мысли XIX века, как «крупная личность на заре нашего литературного возрождения». Его роль «в истории армянского просветительского движения» было всеохватывающим, обусловленным интересом к его личности со стороны литературоведов, историков, философов и экономистов. Предметом данной статьи являются экономические воззрения Назаряна. Его заметки по вопросам образования, купечества, богатства, форм управления представляют определенный интерес для познания армянской экононмической мысли того времени.

Ключевые слова: *образование, наука, купечество, торговля, богатство, управление, средний класс, материальные и духовные потребности.*

STEPANOS NAZARYAN (Economic Thoughts)

ROBERT NERSES SARINYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract: Stepanos Nazaryan is one the renown names of the Armenian intellectual history of the 19th century as “a great person at the dawn of our literal renaissance”. His participation “In the history of the Armenian illumination movement” was crucial as a “thorough personality”, and it is not accidental that literature critics, historians, philosophers and economists address his being Armenian and preserving Armenian identity from various viewpoints. The article examines the economic views of Nazaryan. His statements and views on education and science, merchant class, wealth, forms of governance and other issues “extended and widened” by him throughout his career are of interest in the context of the Armenian Economic though of the period.

Keywords: *Education, science, trade, merchant class, wealth, middle class, material and spiritual needs.*